ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 8, 1957 Общественные науки

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄԵԾ ՌԵՎՈԼՅՈՒՑԻԱՅԻ 40-ԱՄՅԱԿԻՆ

Հ. Ավետիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼԵՆԻՆՅԱՆ ԿՈՄԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՅԻ ԷԼԵԿՏՐԻՖԻԿԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԱՌԱՋԻՆ ՀՆԳԱՄՅԱԿԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Ռուսաստանի էլեկտրիֆիկացման գլխավոր պլանը (ԳՈԷԼՌՈ) համարելով «պարտիայի երկրորդ ծրագիրը», Վ. Ի. Լենինը ուսուցանում էր, որ «Պարտիայի մեր ծրագիրը չի կարող միայն պարտիայի ծրագիր մնալ։ Դա պետք է դառնա մեր տնտեսական շինարարության ծրագիրը... դա պետք է լրացվի պարտիայի երկրորդ ծրագրով, ամբողջ ժողովրդական տնտեսությունը վերաստեղծելու և այն մինչև ժամանակակից տեխնիկան հասցնելու աշխատանքների պլանով։ Առանց էլեկտրիֆիկացիայի պլանի մենք իսկական շինարարության անցնել չենք կարող։ ...Միայն այն ժամանակ, երբ երկիրն էլեկտրիֆիկացվի, երբ արդյունաբերությունը, գյուղատնտեսությունն ու տրանսպորտը դրվեն ժամանակակից խոշոր արդյունաբերության տեխնիկական բազայի վրա, միայն այն ժամանակ մենք կհաղթենք վերջնականապես»[1]։

Երկրի էլեկտրիֆիկացման մարտական առաջադրանքը Լենինը դրել է կոմերիտմիության առաջ 1920 թ. հոկտեմբերի 2-ին՝ ՌԿԵՄ երրորդ համագումարում արտասանած իր պատմական ճառում։ Այդ խնդիրը Լենինը համարեց կարևորագույնը կոմերիտմիության համար, քանի որ առանց նրա կենսագործման անհնարին էր կոմունիստական հասարակարգի կառուցումը։

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի հաղթանակից հետո Կոմունիստական պարտիան ձեռնամուխ է լինում երկրի էլեկտրիֆիկացման լենինյան պլանի իրագործմանը։ Էլեկտրիֆիկացման աշխատանքները բուռն թափով ծավալվում են ժողովրդական տնտեսության զարգացման առաջին հնգամյակի տարիներին։ Սովետական Միության, այդ թվում և նրա անբաժանելի մասը կազմող Սովետական Հայաստանի, ինդուստրացումը և գյուղատնտեսության զարգացումը պայմանավորված էին երկրի էլեկտրիֆիկացիայով։ Հնգամյակի վերջում Հայաստանի ժողովրդական տնտեսության էլեկտրիֆիկացիայի ընդհանուր պահանջը կազմելու էր 173 միլիոն կիլովատ-ժամ, որը մոտ 12 անգամ պետք է գերազանցեր 1927/28 տնտեսական տարվա պահանջը։ Այդ իսկ պատճառով հնգամյա պլանով խնդիր էր դրվում մաքսիմալ չափով օգտագործել ռեսպուբլիկայի ջրային ռեսուրսները, կառուցել շրջանային և տեղական նշանակություն ունեցող մի շարք էլեկտրակայաններ։

Այդ նպատակով նախատեսվում էր ներդնել 38 միլիոն ռուբլի։ Ռեսպուբլիկայի էլեկտրիֆիկացման աշխատանքները կոչված էին ապահովելու ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի հարաճուն վերելքը։

[1] Վ. Ի. Լենին. Երկեր, հատ. 31, էջ 632, 634։

Ընդունելով ռեսպուբլիկայի էլեկտրիֆիկացման հնգամյա պլանը, Հայաստանի Կոմունիստական պարտիան ուշադրության կենտրոնում է պահում այդ պլանի կատարումը։

Կոմունիստական պարտիայի կողմից ղեկավարվող և ոգեշնչվող աշխատավոր երիտասարդությունը անսպառ եռանդով և ստեղծագործական խանդավառությամբ ձեռնամուխ է լինում էլեկտրիֆիկացման պլանի կենսագործման դժվարին գործին։

ՀԼԿԵՄ կազմակերպությունները պարտիական կազմակերպությունների ղեկավարությամբ լայն բացատրական մասսայական աշխատանք են տանում ժողովրդական տնտեսության զարգացման առաջին հնգամյա պլանի նախագծումները ողջ երիտասարդության սեփականությունը դարձնելու ուղղությամբ։ Այդ խնդիրները քննարկվում են կոմերիտական և երիտասարդական ժողովներում, որտեղ աշխատավոր երիտասարդությունը պարտավորություն է վերցնում առաջին հնգամյա պլանով նախատեսված խնդիրները ժամանակին կենսագործելու համար։ 1929 թ. մայիսին կայացած ՀԼԿԵՄ 6-րդ համագումարը միահամուռ կերպով հավանություն տալով պարտիայի 16-րդ կոնֆերանսի բոլոր որոշումներին, ռեսպուբլիկայի կոմերիտական կազմակերպությունների առաջ գծեց նրա աշխատանքի և պայքարի ծավալուն ծրագիրը։ ՀԼԿԵՄ-ն իր աշխատանքը վերակառուցեց այնպես, «որ տնտեսական շինարարության խնդիրները դարձան նրա ամբողջ աշխատանքի առանցքը»[1]։

Սոցիալիստական նոր արտադրական հարաբերությունները, ընկերական համագործակցությունը և փոխադարձ օգնությունը, աշխատավոր մասսաների ակտիվությունն ու անձնազոհությունը հանդիսացան այն գլխավոր և վճռական ուժը, որը պայմանավորեց արտադրողական ուժերի հզոր զարգացումը՝ թե՛ արդյունաբերության և թե՛ գյուղատնտեսության մեջ։ Այդ իսկ պատճառով Կոմունիստական պարտիան աշխատավոր մասսաների ստեղծագործական գործունեության կազմակերպումը դրեց իր աշխատանքների ուշադրության կենտրոնում։

1929 թ. հունվարի 20-ին, երբ «Պրավդա» թերթը առաջին անգամ հրապարակեց Լենինի 1918 թ. գրած «Ի՞նչպես կազմակերպել մրցությունը» հոդվածը, «Կոմսոմոլսկայա Պրավդա» թերթը և ՀամԼԿԵՄ Կենտկոմը կոչով դիմեցին Սովետական Միության բոլոր կոմերիտականներին՝ սոցիալիստական մրցությունը սկսելու մասին։ ՀԼԿԵՄ Կենտկոմը և նրա օրգան «Ավանգարդ» թերթը իրենց հերթին դիմեցին ռեսպուբլիկայի կոմերիտական կազմակերպություններին՝ սոցիալիստական մրցությունը նախապատրաստելու և անցկացնելու կոչով[2]։

Առաջին հնգամյակի դրոշի տակ ծավալվեց սոցիալիզմի տնտեսական հիմքի հերոսական շինարարությունը։ Հայաստանի էլեկտրիֆիկացիայի զարգացման առաջին հնգամյա պլանը հաստատվելուց հետո այս խնդիրը լուծելու համար ողջ աշխատավորության հետ միասին պայքարի դուրս եկավ նաև լենինյան կոմերիտմիությունը։

Հայաստանի Լենինյան կոմերիտմիությունը էլեկտրիֆիկացիայի քնագավառում իր առաջին մկրտությունն ստացավ Զորադէսի շինարարության գոր-

---

[1] Հայաստանի Կոմունիստական (բ) կուսակցության 7-րդ համագումարի որոշումները, 1930, էջ 12։

[2] «Ավանգարդ», 22 մարտի, 1929։

ծում։ Զորագէսի շինարարության համար մղվող համառ մարտերում ծնվեց, աճեց և քաղաքականապես կոփվեց Զորագէսի կոմերիտմիությունը։ Նրա երիտասարդ կերտողները շինարարության պատմության մեջ մտցրին ռևոլյուցիոն համառության, անձնազոհության հերոսական օրինակներ, հաղթահարելով իրենց ճանապարհին ընկած ամեն մի խոչընդոտ։ Շինարարության տեխնիկայի թույլ զարգացած լինելու հետևանքով շատ դժվար էր Զորագէսի կայանի կառուցումը։ Այդ դժվարությունները կրկնապատկվում էին լեռնային պայմաններում, ուր պահանջվում էր հաղթահարել բնական մեծ արգելքներ։ Այդ պատճառով, Զորագէսում սովորական խուլ ամրարտակի կառուցման սկզբնական ծրագիրը վտանգավոր համարվեց և փոխարինվեց շլյուզ ամրարտակի ծրագրով։ Ամբողջ Սովետական Միության մեջ Զորագէսին էր պատկանում առաջին գլանաձև շլյուզ ամբարտակի և առաջին ջրաճնշիչ թունելի կառուցման պատիվը, որը դարձնում էր Զորագէսը ժամանակի միակ կառուցումը Սովետական Միության մեջ։ Շինարարները հարկադրված էին աշխատել ուսանելով և կատարել իրենց դրեթե յուրաքանչյուր քայլը, նախադեպ չունենալով անցյալում։

1929 թ. սկսած, Զորագէսի կոմերիտական կազմակերպությունը սկսում է աչքի ընկնող դեր խաղալ շինարարության մեջ։ Հնգամյակի առաջին տարին այստեղ նշանավորվեց աշխատանքի սրտադրողականության վճռական բեկումով, որն ապահովվեց ողջ քանվորության, նրա երիտասարդ սերնդի աննախընթաց աշխատանքային վերելքով։ Սոցիալիստական մրցությունը դառնում էր մի հզոր լծակ, որի օգնությամբ բանվոր դասակարգը վերակառուցում էր երկրի ամբողջ տնտեսական և կուլտուրական կյանքը։ Մրցման դուրս եկան Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի բանվորներն ու ծառայողները։ 1929 թ. հունիսի 5-ին Զորագէս ժամանեց եղբայրական Վրաստանի Ռիոնգէսի կառուցողների պատվիրակությունը։ Զորագէսում սոցիալիստական մրցության պայմանագիր ստորագրեցին Անդրկովկասի ամենախոշոր հիդրոէլեկտրակայանների շինարարների կոլեկտիվների ներկայացուցիչները։ Պայմանագրում ասված էր. «Մենք Ռիոնգէսի և Զորագէսի բանվորներս ու ծառայողներս սոցիալիստական մրցության ենք մտնում ապացուցելու համար թե մեզանից ով է կառուցում շուտ, էժան և լավ»[1]։

Պարտիական կազմակերպությունների ղեկավարությամբ աշխուժանում է արհմիութենական և կոմերիտական կազմակերպությունների աշխատանքը։ «Կոմերիտականները դարձան հարվածային շարժման առաջամարտիկները»[2]։

Վերակառուցվում են նաև Զորագէսի ԼԿԵՄ կազմակերպության աշխատանքները։ 1929 թ. հունիսի 20-ին Զորագէսի շինարարության ԼԿԵՄ կազմակերպությունը հրավիրում է սոցիալիստական մրցությանը նվիրված կոնֆերանս, որին մասնակցում են ավելի քան 300 երիտասարդ բանվորներ։ Կոնֆերանսում սոցիալիստական մրցության մասին ըստ էության արտահայտվեցին 37 հոգի, որոնք շեշտեցին մրցման կոնկրետ աշխատանքներին անցնելու անհրաժեշտությունը։ Այստեղ կազմվեց 5 հոգուց բաղկացած հանձնաժողով՝ շինարարության վարչության հետ սոցիալիստական մրցության պայմանագիր կնքելու համար։ Կոնֆերանսի մասնակիցները մեծ խանդավառությամբ ընդու-

---

1 «Խորհրդային Հայաստան», 12 հունիսի, 1929։

2 Ա. Խանջյան, ՀԿ(բ)Կ հաշվետվությունը 7-րդ համագումարին, Երևան, 1930, էջ 33։

նեցին Եղրայլրական Վրաստանի Ռիոնգէսի շինարարների հրավերը՝ սոցիալիստական մրցություն սկսելու մասին։ Բանվոր երիտասարդությունը հանդիսավոր կերպով խոստացավ կարճ ժամկետում վերացնել գոյություն ունեցող թերությունները, կառուցել էժան, արագ և որակով[1]։

Զորագէսի ողջ բանվոր երիտասարդությունը ձեռնամուխ է լինում սոցիալիստական մրցության առթիվ Լենինի տված ցուցումների պրակտիկ իրականացմանը։ Կոմերիտմիությունը հաջողությամբ սկսում է պարտիայի գիծը տեղափոխել իր կոնկրետ գործունեության բնագավառը՝ դաղափարապես և կազմակերպչորեն մոբիլիզացնելով բանվոր երիտասարդությանը։ Սոցիալիստական մրցության պրակտիկ անցկացման շնորհիվ Զորագէսի կոմերիտական կազմակերպությունը ձեռք է բերում մեծ հաջողություններ՝ տնտեսական շինարարության դժվարությունների դեմ պայքարելու առպարեզում։

Կոմերիտական կազմակերպությունը անձնազոհ աշխատանք տարավ հիդրոկայանի գլխավոր մասերի՝ թունելի և ամբարտակի կառուցման բնագավառում։ «Այն ժամանակ, երբ մենք կիրճում հանապարհ էինք պատրաստում, որպեսզի բաց անենք թունելի առաջին պատուհանը,— գրում է Զորագէսի շինարարության պետի տեղակալ Աղամալյանը,— իսկ այդ աշխատանքի ձեռնարկումը ամենամեծ դժվարությունների հետ էր կապված, որովհետև բանվորները պարաններով պետք է բարձրանային առաջին պայթեցումների համար, կոմերիտականներն առաջիններն եղան, որ ձեռնարկեցին այդ աշխատանքը, չվախեցան դժվարություններից և բաց արին թունելի առաջին պատուհանը ու այնուհետև ոչ մի ջանք չխնայեցին թունելի աշխատանքները ժամանակին ավարտելու համար»[2]։

1929 թ. նոյեմբերի 29-ին, Հայաստանում սովետական կարգեր հաստատելու 9-րդ տարեդարձի օրը արդեն հաղթահարված էին հողային աշխատանքները։ Զորագէսը իր առաջին հաղթանակն էր տոնում բնության հանդեպ։ Թունելի առանցքով ուղիղ գծով փորված էր մոտ 2000 մետր, որից 338 մետրը կարծր բնահող էր։

Խոշոր ձեռնարկում էր նաև ջրամբարտակի կառուցումը։ Երբ գրվել էր ջրամբարտակի հիմքը, ջրհեղեղը վտանգի տակ դրեց նրա կառուցումը։ Զորագէսի արագահոս ջուրը սպառնում էր լցնել ամբողջ ջրամբարտակը։ Սակ եթե այդ տեղի ունենար, ջրամբարտակի կառուցման աշխատանքները կկրկնապատկվեին։ Կոմերիտական կազմակերպությունը միասնական կերպով հանդես եկավ ջրհեղեղի դեմ պայքարելու համար, հայտարարվեցին «գոհային օրեր»։ Կոմերիտականները իրենց խանդավառությամբ վարակեցին բանվորական ողջ մասսային և կանխեցին հեղեղման վտանգը։

Զորահիդրոկայանի շինարարության առաջին երկու տարվա պլանների կատարումն ընթացավ կառուցողների, երիտասարդ հարվածայինների ստեղծագործական ակտիվության նախաձեռնության բարձրացման, պարտիայի դխավոր գծի պայքարի համար բոլոր ուժերի մոբիլիզացիայի նշանաբանի տակ։ Սոցիալիստական մրցությունն ու հարվածայնությունը դարձան հնգամյակը չորս տարում կենսագործելու, սոցիալիզմ կառուցելու համար աշխատավոր լայն մասսաների պայքարի հիմնական մեթոդը։ 1930 թ. դեկտեմբերին սոցիալիստական մրցության և հարվածայնության մեջ ընդգրկված էին շինարարության

[1] «Ավանդարդ», 5 հուլիսի, 1929։
[2] Նույն տեղում, 16 նոյեմբերի, 1932։

բանվորների 80 տոկոսը, պարտիականներն ու կոմերիտականները գլխովին ընդգրկված էին հարվածայնության մեջ[1]։

Կոմերիտական կազմակերպությունը պայքար էր մղում աշխատանքի արտադրողականության բարձրացման, հումքի, նյութերի, սարքավորումների առավել ռացիոնալ օգտագործման, շինարարության որակական ցուցանիշների լրիվ կատարման համար։ Կոմերիտական հարվածայինների՝ քարտաշների, բետոնագործների, ամրացնողների, հողափորների, հյուսների քրտնաջան աշխատանքի շնորհիվ 1928 թ. հոկտեմբերի 1-ից մինչև 1930 թ. հունվարի 1-ը Զանգեզուրի շինարարական աշխատանքների պլանը կատարվեց 102,5 տոկոսով, աշխատանքի ընդհանուր ինքնարժեքը իջեցվեց 20 տոկոսով։ Ավելի մեծ հաջողություններ ձեռք բերվեցին 1930 թ.։ Արտադրական պլանները կատարվեցին 105 տոկոսով, ինքնարժեքը իջեցվեց 10 տոկոսով, աշխատանքի արտադրողականությունը բարձրացավ 18,5 տոկոսով[2]։

Հաջողությամբ կատարելով առաջին հնգամյակի առաջին երկու տարվա առաջադրանքները, սովետական ամբողջ ժողովրդի հետ միասին, Հայաստանի կոմերիտմիությունը թևակոխում է հնգամյակի երրորդ վճռական տարին։ Սովետական Միությունում միայն 1931 թ. պետք է արտադրվեր այնքան նոր էլեկտրաէներգիա, որքան նախատեսված էր ԳՈԷԼՌՈ-ի ամբողջ պլանով։ Էլեկտրաէներգիայի արտադրանքը 8,8 միլիարդ կիլովատ-ժամից հասնելու էր 12,7 միլիարդ կիլովատ-ժամի։ Ամրապնդելով կատարված շրջադարձը, կոմերիտմիությունը պետք է մոբիլիզացներ իր բոլոր ուժերը հնգամյակի 3-րդ վճռական տարվա ծրագիրը կատարելու համար։ Երիտասարդության ուսուցչական խանդավառությունը, նրա հարաճուն ակտիվությունն ու ինքնագործունեությունը անհրաժեշտ էր ուղղել էլեկտրիֆիկացիայի հունով։ Վ. Ի. Լենինի պատգամների՝ ԳՈԷԼՌՈ-ի պլանի ընդունման 10-րդ տարեդարձի օրը (1930 թ. դեկտեմբերի 22-ին), մեծ ուսուցչի անմար հիշատակը հավերժացնելու համար, լենինյան կոմերիտմիությունը վերցրեց երկրի էլեկտրիֆիկացիայի շեֆությունը։

Ընդունելով այդ պատմական որոշումը, ՀամԼԿԵՄ Կենտկոմը և «Կոմսոմոլսկայա պրավդա» թերթը կոչով դիմեցին Սովետական Միության ողջ երիտասարդությանը՝ էլեկտրիֆիկացիայի շեֆական աշխատանքները սկսելու մասին։

Երիտասարդ լենինյանները, իրենց ստեղծագործական նախաձեռնությամբ, եռանդով ու խանդավառությամբ լծվում են էլեկտրիֆիկացման լենինյան պատգամները կենսագործելու խնդրին։

«Ավանգարդ» թերթը 1930 թ. դեկտեմբերի 22-ի համարում (№ 294) հրապարակում է ՀԼԿԵՄ Կենտկոմի, ժողտնտգլխորհի էներգոբյուրոյի և «Ավանգարդի» կոչը՝ ուղղված ռեսպուբլիկայի կոմերիտականներին և երիտասարդներին՝ էլեկտրաշեֆական աշխատանքները սկսելու մասին։ Ռեսպուբլիկայի էլեկտրիֆիկացիայի և էլեկտրաշեֆական աշխատանքներին անցնելու հարցերը բայնորեն քննարկվում են նաև այդ օրերին Երևանում տեղի ունեցող ՀԼԿԵՄ 7-րդ համագումարում (1930 թ. դեկտեմբերի 20—26)։

Համագումարը պարտավորեցնում է ՀԼԿԵՄ Կենտկոմին և կոմերիտական

---

[1] Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 10, գ. 264, թ. 15։

[2] Նույն տեղում, գ. 234, թ. 80—86։

կազմակերպություններին, «որպես շեֆ, ավելի լուրջ ուշադրություն դարձնել էլեկտրաշինարարությանը, մոբիլիզացիայի ենթարկել ողջ կոմերիտական կազմակեպությանը և աշխատավոր երիտասարդությանը հիդրոկայանների շինարարության արագացման, շինանյութերի ռացիոնալ օգտագործման, արդյունաբերությունն էներգիայով ապահովելու, էներգիայի ռացիոնալ ծախսման և էլեկտրաէներգիան վատնողների դեմ պայքար ծավալելու համար»[1]։

Կոմերիտմիության շեֆության դաղափարը էլեկտրիֆիկացիայի նկատմամբ կյանքում իրագործելու համար ՀԼԿԵՄ Կենտկոմի բյուրոյի որոշմամբ ՀԼԿԵՄ Երևանի և Լենինականի քաղկոմներին, Կիրովականի և Ալավերդու շրջկոմներին կից ստեղծվում են էլեկտրիֆիկացիայի շտաբներ։ ՀԼԿԵՄ Կենտկոմում կազմակերպվում է էլեկտրիֆիկացիայի սեկտոր, «Ավանգարդ» թերթում բաժին՝ էլեկտրիֆիկացիայի հարցերը և էլեկտրաշեֆական աշխատանքները լուսաբանելու համար։ Բոլոր խոշոր գործարաններում, ֆաբրիկաներում, հանքահորերում, շինարարական օբյեկտներում անց են կացվում կոմերիտական ակտիվի և ինժեներա-տեխնիկական անձնակազմի ժողովներ՝ «Արշավ տեխնիկայի համար և էլեկտրիֆիկացիայի նկատմամբ կոմերիտմիության շեֆությունը» թեմայով[2]։

ՀԼԿԵՄ Կենտկոմը կոմերիտական կազմակերպություններին առաջարկում է էլեկտրիֆիկացման ճակատում ուշադրության առնել տվյալ շրջանի համար ամենաառաջնակարդ, ամենակարևոր բնագավառը՝ կապիտալ շինարարության ճակատը։ Կառուցվող Զորագէսի, Քանաքեռդէսի, երկրորդ Երդէսի շինարարություններում վճռվում էր ռեսպուբլիկայի էլեկտրիֆիկացիայի բախտը։ Սակայն, չնայած ձեռք բերված նվաճումներին, էլեկտրաշինարարությունը ետ էր մնում և սպառնում էր դառնալ ժողովրդական տնտեսության առաջընթացն արգելակող գործոններից մեկը։ Զգացվում էր հիմնական շինանյութերի սուր պակաս։ Զորագէսում ստացված էր 1930 թ. հասանելիք անտառանյութի պահանջի 57,4 տոկոսը, սղոցած փայտի՝ 54, երկաթի՝ 81, ցեմենտի՝ 66 տոկոսը[3]։

Շինանյութերի պակասի պատճառով դլխավոր թունելի մի շարք վճռական ճյուղերում չէր կատարված շինարարության պլանը։ Արմատուրայի պատրաստումը կատարված էր 83, արմատուրայի տեղադրումը՝ 61,5, տորկրետային աշխատանքը՝ 35 տոկոսով[4]։

Էլեկտրաշեֆական աշխատանքներին անցնելուց հետո «Զորագէսի համախմբված կազմակերպությունը թափանցում է աշխատանքի էության մեջ, առաջ քաշելով իր գործնական և անհրաժեշտ որոշումները արտադրական-ֆինանսական պլանի կատարման ուղղությամբ»,— գրում է Մոսկվայում լույս տեսնող «Կոմսոմոլ ի էլեկտրիֆիկացիա» ամսագիրը։

Կոմերիտական կազմակերպությունը, որպես հարվածային բրիգադա, իր ուժերը նետում էր այն բնագավառը, որտեղ ճնդրվածը, դժվարություն կար և միշտ հաղթանակով էր ավարտում իր ձեռնարկած գործը։

Ահա մի քանի օրինակ։ Երբ շինարարությունը զգում էր երկաթի սուր կարիք, կոմերիտական կազմակերպությունը պայքար էր հայտարարում երկաթի

[1] ՀԼԿԵՄ 7-րդ համագումարի բանաձևերը, Երևան, 1931, էջ 10—11։

[2] Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 48, գ. 498, թ. 17։

[3] Նույն տեղում, գ. 234, թ. 84։

[4] Նույն տեղում, գ. 264, թ. 15։

մնացորդի կորստի դեմ և շարաթօրյակներ էր կազմակերպում թափթփված երկաթը հավաքելու համար։ «Ոչ մի գրամ երկաթ չպետք է կորչի»— ահա կոմերիտականների լոզունգը։ Այս բոլորի շնորհիվ շինարարությունը լրացուցիչ ստանում է մի քանի տասնյակ տոննա երկաթ։

Երկաթուղին դժվարանում էր ժամանակին հասցնել կայանի կառուցման համար անհրաժեշտ նյութերը, վագոնները չէին բավարարում։ Անհրաժեշտ էր ավելացնել վագոնների շրջաստությունը, անմիջապես դատարկել ու ետ ուղարկել ավազի, պեմզայի, ցեմենտի, շինափայտի վագոնները։ Այդ գործին ձեռնամուխ է լինում կոմերիտական կազմակերպությունը և բուքսիրային աշխատանքով օգնում ու արագացնում վագոնների շրջանառությունը և շինանյութերի դատարկումը, տեղափոխումն ու օգտագործումը։ Էլեկտրացեխի ԼԿԵՄ կազմակերպության անդամները իրենց ցեխում ութ ժամ աշխատելուց հետո երկու ամիս անընդհատ բուքսիրային կարգով աշխատում են թունելում՝ տորկրետի աշխատանքները արագացնելու համար։ Նրանք միաժամանակ իրենց վրա են վերցնում նաև շինանյութը պահեստից 6-րդ ցցաշար (заоон) տեղափոխելու աշխատանքը։

Քանդվել էին թունելի ուղղահայաց շախտի բոլոր երկաթգծերը, գա արգելում էր շինանյութերի տեղափոխմանը։ Այդ պատճառով 4 օր անընդհատ շինարարական աշխատանքները ձախողվում էին։ Հրավիրվում է կոմերիտական ժողով, որտեղ դրվում է գծերի մաքրման և աշխատանքները վերսկսելու խնդիրը։ Կոմերիտական կազմակերպությունը բաժանվում է 3 բրիգադայի, որոնցից մեկը անմիջապես սկսում է գծի մաքրման աշխատանքները, երկրորդը թունելից դուրս է հանում կուտակված հողն ու քարը, իսկ երրորդը տեղափոխում է անհրաժեշտ շինանյութը։ Ձեռնարկած մի շարք միջոցառումների շնորհիվ, կոմերիտական կազմակերպությունը նպաստում է էլեկտրակայանի արագ կառուցման գործին։ Զորագէսի շինարարության աշխատանքները ձգձգվում էին գլխավորապես սարքավորումներ չլինելու պատճառով, ուշանում էր պատվերների ստացումը Լենինգրադի և Խարկովի գործարաններից։ 1931 թ. մարտի 11-ին ՀԼԿԵՄ Կենտկոմի բյուրոն Երևան քաղաքի ինժեներա-տեխնիկական անձնակազմի լայն մասնակցությամբ քննարկելով Զորագէսի և Քանաքեռագէսի շինարարության և կոմերիտական կազմակերպությունների մասնակցության ուժեղացման հարցը, որոշում է հատուկ հսկողության տակ վերցնել հատկապես այդ երկու կարևոր հիդրոկայանների շինարարության աշխատանքները։ Խնդիր է դրվում Կենտկոմի էլեկտրիֆիկացիայի սեկտորի միջոցով կապ հաստատել Խարկովի էլեկտրատեխնիկական գործարանի ԼԿԵՄ կազմակերպության հետ, գեներատորների ստացումը արագացնելու և Մոսկվայի «Մոստեժարտ» գործարանի ԼԿԵՄ կազմակերպության հետ՝ երկաթյա ջրաճնշիչ խողովակների պատվիրները ժամանակին ստանալու համար։ Միաժամանակ որոշվում է վահանները և նրանց սարքավորումները ժամանակին ստանալու համար կապ հաստատել Անդրկովկասի էլեկտրաշինարարության վարչության ԼԿԵՄ կազմակերպության հետ[1]։

ԼԿԵՄ Կենտկոմի բյուրոյի որոշումից հետո, 1931 թ. մարտի 20-ին Զորագէսի կոմերիտական կազմակերպության ժողովը հատուկ դիմում է ուղղում

---

[1] Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 48, գ. 379, թ. 21։

Խարկովի էլեկտրամեխանիկական գործարանի ԼԿԵՄ կազմակերպությանը, պահանջելով օգնել Զորագէսը ժամանակին շահագործման հանձնելու գործին։ «Զորագէսի կոմերիտականները համոզված են, որ իրենց դիմումը Խարկովի էլեկտրամեխանիկական գործարանի կոմերիտականների կողմից համապատասխան արձագանք կգտնի»,— ասված է դիմումում[1]։

Զորագէսի կոմերիտական կազմակերպությունը «Ավանգարդ» թերթում 1931 թ. ապրիլի 12-ին բաց նամակով դիմում է ՀամԼԿԵՄ Անդրերկրկոմին, ՀԼԿԵՄ Կենտկոմին, Քանաքեռգէսի ԼԿԵՄ կազմակերպությանը և Կիրովականի ԼԿԵՄ շրջկոմին, պարտավորվելով ժամկետից մեկ ամիս շուտ կատարել ԳԷՍ-ի կառուցման աշխատանքները։ Էլեկտրաշնչական աշխատանքներ ծավալելու նպատակով Զորագէսի և Քանաքեռգէսի կոմերիտականները 1931 թ. ապրիլ ամսին մրցման են հրավիրում Եղբայրական Վրաստանի Ռիոնգէսի և Զագէսի ԼԿԵՄ կազմակերպություններին։

ԼԿԵՄ կազմակերպության նախաձեռնությամբ Զորագէսում կազմակերպվում է էլեկտրաղոդողների դպրոց. վերջինիս անհրաժեշտությունը թելադրվում էր նրանով, որ Անդրկովկասում առաջին անգամ Զորագէսում և Ռիոնգէսում պետք է լայնորեն կիրառվեր էլեկտրաղոդումը։ Բոլոր ճնշիչ խողովակները պետք է զոդվեին առանձին օղակներից։ Կոմերիտական կազմակերպության որոշումը հավանություն է ստանում ՀԼԿԵՄ Կենտկոմի և ՀամԼԿԵՄ Անդրերկրկոմի կողմից և Զորագէսում կազմակերպված էլեկտրաղոդողների դպրոցը կադրեր է պատրաստում Անդրկովկասի բոլոր հիդրոկայանների համար[2]։

Անդրկովկասում կառուցվող էլեկտրակայանների սարքավորումների ստացումն արագացնելու գործում մեծ օգնություն է ցույց տալիս «Կոմսոմոլ ի էլեկտրիֆիկացիա» ամսագիրը։ Ամսագրի 5-րդ համարում, 1931 թ. մայիսին տպագրվում է հոդվածաշար՝ «Օգնություն Վրաստանի և Հայաստանի էլեկտրիֆիկացիային» վերնագրով։ Նշելով, որ Անդրկովկասում կառուցվում են Ռիոնգէսը, Զագէսը, Զորագէսը, Քանաքեռգէսը, ամսագիրը պահանջում է այդ կայանները վերցնել կոմերիտական հսկողության տակ և ապահովել նրանց ժամանակին շահագործման հանձնելը[3]։

Այդ նպատակով ամսագիրը հրապարակում է այն գործարանների ու հիմնարկների անունները, որոնք պետք է կատարեին Վրաստանի և Հայաստանի էլեկտրակայանների պատվերները, պահանջելով նրանցից մոբիլիզացնել ուժերը այդ էլեկտրակայանները ժամանակին շահագործման հանձնելը ապահովելու համար։ Տպագրվում է Զորագէսի ԼԿԵՄ բյուրոյի հեռագիրը՝ ուղղված Խարկովի էլեկտրամեխանիկական գործարանի ԼԿԵՄ կազմակերպությանը, որտեղ ասված է. «Զորագէսի համար հիդրոգեներատորների պատրաստման ձգձգումը կխափանի թողարկման նշված ժամկետը։ Կայանի շենքը թույլատրում է սկսել մոնտաժը։ Արագացրեք գեներատորի պատրաստումն ու առաքումը»[4]։

Կոմերիտական կազմակերպությունը մեծ աշխատանք է տանում բանվորական ուժի հոսունության դեմ պայքարելու, շինարարությունը մշտական բանվորական ուժով ապահովելու ուղղությամբ։ 1929 թ. նոյեմբերի 29-ին Մ. Շա-

---

[1] «Ավանգարդ», 20 մարտի, 1931։

[2] Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 19, գ. 216, թ. 1։

[3] «Կոմսոմոլ ի էլեկտրիֆիկացիա», 1931, № 5։

[4] Նույն անդում, էջ 12։

հինյանը գրում էր, որ «ապրելն այստեղ դժվար է, վայրը խուլ է, պայմանները ծանր և լավորակ կադրային բանվորները հազվադեպ։ Շատերը գալիս են և գնում, սևագործները մշտական չեն և բանվորական ուժի ճգնաժամն այստեղ գրեթե երբեք չի վերանում»[1]։ Սակայն այս պատկերը միանգամայն փոխվում է, երբ կոմերիտմիությունը սկսում է իր էլեկտրաշեֆական աշխատանքները։

Ռեսպուբլիկայի տարբեր վայրերից Զորագէս եկան առույգ, երիտասարդական ավյունով լի հարյուրավոր կոմերիտականներ ու պատանիներ։ Կոմերիտական ուղեղրերով շինարարությունում աշխատելու էին գալիս ոչ միայն տեխնիկներ, ինժեներներ, աշխատանքի փորձ ունեցող երիտասարդներ, այլև բազմաթիվ անփորձ մարդիկ, որոնք առաջին անգամ էին շինարարական աշխատանքի ձեռնամուխ լինում։

Երիտասարդ բանվորներն ու բանվորուհիներն այստեղ ձեռք բերեցին ոչ միայն մասնագիտություն, այլև անցան կյանքի ու քաղաքական դաստիարակության մեծ դպրոց։ Պարտիական կազմակերպության ղեկավարությամբ երիտասարդությունը մասնակից էր դառնում շինարարության հասարակական և կուլտուրական կյանքին, բարձրացնում կրթական մակարդակը, ձեռք բերում քաղաքական գիտելիքներ։ Շատ պատանիներ և աղջիկներ ընդունվեցին ՀԼԿԵՄ շարքերը։ Զորագէսը՝ Հայաստանում ընդհանուր էլեկտրիֆիկացիայի առաջնեկը, դարձավ պարտիայի գծի փայլուն հաղթանակներից մեկը, նա կարողացավ ստեղծել ինժեներա-տեխնիկական աշխատողների և բանվորների փորձված կադրեր, որոնք անհրաժեշտ էին ռեսպուբլիկայի հետագա էլեկտրիֆիկացման համար։ Զորագէսի հիմնական սարքավորումները և մեքենաները պատրաստվեցին Սովետական Միության գործարաններում։ Լենինգրադի Կիրովի անվան գործարանում ստեղծված գլանաձև փականը վերամբարձ մեքենաներով ամենախոշոր փականներից մեկն էր ոչ միայն Սովետական Միությունում, այլև ամբողջ աշխարհում։

Ինչպես Հայաստանում, այնպես էլ ողջ Անդրկովկասում էլեկտրաշինարարության ամենախոշոր միավորը Քանաքեռում կառուցվող հիդրոկայանն էր, որի շինարարությունը սկսվեց 1930 թ. և լայն թափ ստացավ 1931 թ. վերջերից սկսած։ Սկզբնական նախագծով նախատեսված էր Քանաքեռգէսը կառուցել 42 հազար կիլովատ հզորությամբ, սակայն Սևանա լճից հավելյալ ջուր բաց թողնելու խնդիրը վերջնականապես լուծելուց հետո վերանայվեց Քանաքեռգէսի նախագիծը և որոշվեց այն կառուցել 88 հազար կիլովատ հզորությամբ։ Կայանի կառուցման վրա ներդրվեց 75 201 հազար ռուբլի[2]։ Կոմունիստական պարտիան և Սովետական կառավարությունը մեծ նշանակություն են տալիս Քանաքեռգէսի կառուցմանը։ Հայաստանի Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեն մի շարք միջոցառումներ է մշակում Քանաքեռգէսը ժամանակին շահագործման հանձնելու համար։ Քանաքեռգէսի շինարարության աշխատանքներին մեծ օգնություն են ցույց տալիս ռեսպուբլիկայի կոմերիտական կազմակերպությունները։

ՀԼԿԵՄ Կենտկոմի բյուրոյի որոշմամբ 1931 թ. ապրիլ ամսին Արզնի գյուղի մոտ կառուցվող Քանաքեռգէսի ամբարտակի վրա աշխատելու համար գործուղվում են 110 կոմերիտական քարտաշներ և որմնադիրներ, որոնց ակ-

---

[1] «Խորհրդային Հայաստան», 29 նոյեմբերի, 1929։

[2] Խորհրդային Հայաստանի 15 տարին թվերով, Երևան, 1935, էջ 50—51։

ուիվ աշխատանքով կանխվում է Զանգու գետից սպասվող հեղեղը։ ՀԿԿՄ Կենտկոմի էլեկտրասեկտորը կապ է պահպանում էլեկտրականների վարչության հետ՝ Քանաքեռգէսի նախագծի ստացումը արագացնելու համար[1]։

Հոկտեմբերյան ռևոլյուցիայի 14-րդ տարեդարձի կապակցությամբ, մինչև 1931 թ. նոյեմբերի 7-ը, Երևանի կոմերիտական կազմակերպությունը Քանաքեռգէս է ուղարկում 228 կոմերիտականներ։ ԳԷՍ-ի շինարարությանը բանվորական ուժ են տրամադրում նաև Կոտայքի, Ախտայի, Աշտարակի շրջանների կոմերիտական կազմակերպությունները[2]։

Հայաստանի Կոմունիստական պարտիայի լենինյան ճիշտ քաղաքականությունը ապահովեց սոցիալիստական արդյունաբերության արտադրանքի անշեղ բարձրացումը երկրի ժողովրդական տնտեսության մեջ։ 1931 թ. Հայաստանի ժողովրդական տնտեսության ամբողջ արտադրանքը, համեմատած 1930 թ. հետ, ավելացավ 16,1 տոկոսով, մինչդեռ արդյունաբերության արտադրանքը այդ նույն ժամանակամիջոցում ավելացավ 47,4 տոկոսով։ Ամբողջ ժողովրդական տնտեսության մեջ արդյունաբերական արտադրանքը 1931 թ. հասավ 42,4 տոկոսի։

Էլեկտրաէներգիայի արտադրանքը մեկ տարում ավելացավ 24,4 տոկոսով։ Բնակչության մեկ շնչին ընկնող էլեկտրաէներգիան կազմեց 47,3 կիլովատ-ժամ։ Կապիտալ ներդրումների գումարը, 1930 թ. համեմատությամբ, աճեց 55 տոկոսով։ Առանձնապես արագ իրացվեցին հնգամյա պլանի հիմնական ներդրումները էլեկտրիֆիկացիայի մեջ։ Երեք և քառորդ տարում էլեկտրաշինարարության հնգամյա պլանը ներդրումների գծով կատարվեց 112 տոկոսով[3]։ Աճեց բանվորների թիվը արդյունաբերության մեջ՝ 45, շինարարության մեջ 15,4 տոկոսով։ Սակայն Հայաստանի տնտեսական շինարարության մեջ գոյություն ունեին լուրջ թերություններ։ Այդ թերությունները նշեց ՀամԿ(բ)Կ Կենտրոնական Կոմիտեն, որը 1931 թ. հոկտեմբերի 31-ին ընդունեց որոշում «ՀամԿ(բ)Կ Անդրերկրկոմի և Վրաստանի, Ադրբեջանի ու Հայաստանի կենտկոմների զեկուցումների առթիվ»։ Հայաստանի արդյունաբերության, շինարարության և էլեկտրիֆիկացիայի ասպարեզում ՀամԿ(բ)Կ Կենտկոմի որոշումներից բխող կարևորագույն խնդիրներն էին արդյունաբերության և էլեկտրաշինարարության տեմպերի արագացումը, կառուցվող օբյեկտների (Զորագէս, Քանաքեռգէս, ցեմենտի գործարան, քիմիական կոմբինատ) շուտափույթ շահագործման հանձնելը և հանքային արդյունաբերության, մանավանդ պղնձարդյունաբերության լայն զարգացումը[4]։

ՀԿ(բ)Կ Կենտկոմը 1931 թ. նոյեմբերի 22-ին միջոցառումներ մշակեց ՀամԿ(բ)Կ Կենտկոմի որոշումը կյանքում անշեղորեն կենսագործելու համար։ Դրվեց արդյունաբերության և էլեկտրաշինարարության օբյեկտների կառուցման տեմպերի զարգացման խնդիրը՝ ելակետ ունենալով շինարարական միջոցների հիմնական մասի կենտրոնացումը, կարևորագույն կառույցներում

[1] Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 40, գ. 239, թ. 14։

[2] Նույն տեղում, ֆ. 48, գ. 491, թ. 85—86։

[3] Հայաստանի Կոմունիստական բոլշևիկների կուսակցության 8-րդ համագումարի բանաձևեր, Պետհրատ, Երևան, 1932, էջ 5։

[4] Տե՛ս ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1931 թ. հոկտեմբերի 31-ի որոշումը՝ ՀամԿ(բ)Կ Անդրերկրկոմի, Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի կենտկոմների զեկուցումների առթիվ, Երևան, 1931։

անընդհատ շինարարության կիրառումը, շինարարական աշխատանքների մեխանիզացիան և այլն։ Դեկտեմբերը հայտարարվում է արդիինպլանների ճեղքվածքների վերացման միամսյակ[1]։

Համկ(բ)կ Կենտկոմի և ՀԿ(բ)Կ Կենտկոմի որոշումները գործողության ծրագիր հանդիսացան ռեսպուբլիկայի պարտիական կազմակերպությունների և ողջ աշխատավորության համար։ ՀԼԿԵՄ-ը ևս ձեռնամուխ եղավ պարտիայի դիրեկտիվների կենսագործմանը։ Նա մեծ աշխատանք կատարեց Քանաքեռգէսում, որտեղ կառուցման աշխատանքների տեմպը միանգամայն անբավարար էր։ 1930 թ. Քանաքեռգէսի կառուցման աշխատանքները կատարվել էին միայն 22, իսկ 1931 թ. 45 տոկոսով։ Էլեկտրաշինարարության ղեկավար օրգաններում մեծ չափով տեղ էին գտել դիմազրկությունը, բանվորական ուժի պակասը։ Ետ էր մնում կառուցողական աշխատանքների մեքենայացումը, թույլ էր քաղաքական-մասսայական աշխատանքները կառուցող բանվորների մեջ։ Նման պայմաններում 1932 թ. հունվարին ՀԼԿԵՄ Երևանի քաղկոմի պլենումը լսելով Քանաքեռգէսի շինարարության պետի զեկուցումը շինարարության ընթացքի մասին, մեծ ոգևորությամբ ընդունում է Քանաքեռգէսի շեֆությունը, նպատակ դնելով կոմերիտական ողջ մասսայի ակտիվ մասնակցությամբ ապահովել այդ կարևորագույն շինարարության համար առաջադրված խնդիրների կենսագործումը։ Պլենումը գտնում է, որ «Երևանի կոմերիտական կազմակերպության շեֆական աշխատանքների դնահատականը որոշվելու է Քանաքեռգէսի պլանների քանակական և որակական կատարման ցուցանիշներով»[2]։

Պլենումը դիմում է Մարտունու, Թալինի, Կոտայքի, Նոր Բայազետի ԼԿԵՄ շրջկոմներին՝ Քանաքեռգէսը մշտական բանվորական ուժով ապահովելու համար։ Երևանի կազմակերպությունը նախաձեռնություն է վերցնում երիտասարդ շինարարների մեջ, տեղի ԼԿԵՄ կազմակերպության միջոցով սոցիալիստական մրցությունը, հարվածայնությունը, ինքնակոնտրակտացիան ծավալելու համար։ Այստեղ կազմակերպվում են պլան-օպերատիվ, ռացիոնալիզատորական, տեխնիկայի տիրապետման բրիգադաներ։ Աշխատանք է տարվում անտհաշվարկային բրիգադաների սկզբունքը կիրառելու համար։ Ստեղծվում են աշխատանքի արտադրողականության բարձրացման և ինքնարժեքի իջեցման բրիգադաներ, պայքար է սկսվում կեղծ հարվածայինների դեմ։ Երիտասարդության եռանդն ուղղվում է Քանաքեռգէսի առաջին հերթը ժամանակին և որակով շահագործման հանձնելու գործին։ Այս բոլորի շնորհիվ մինչև 1932 թ. մայիս ամիսը հողային աշխատանքների պլանը կատարվում է 100 տոկոսով։ Սակայն միանգամայն անբավարար էր շինանյութերի մատակարարումը. ցեմենտի, փայտի, երկաթի բացակայության պատճառով երկաթ-բետոնային աշխատանքները կատարված էին միայն 10 տոկոսով։ 1932 թ. երկրորդ եռամսյակում չէր ստացված ոչ մի տոննա ցեմենտ, 5000 խոր. մ անտառանյութի փոխարեն ստացված էր 400 խոր. մ, 500 տոննա արմատուրային երկաթի փոխարեն՝ 6 տոննա երկաթ։ Դեռ չէր տրված 50 տոննանոց կամրջակային կրունկի պատվերը, առանց որի անհնար էր կայանի մոնտաժը, վտանգի տակ էր գտնվում տուր-

[1] «Գործի վերածենք լենինյան շտաբի հոկտեմբերի 31-ի որոշումը», Կուսհրատ, Երևան, 1932։

[2] Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 48, գ. 573, թ. 35։

բինների, վահանների, ամրարձիչների պատվերների ժամանակին կատարելը։ Պրոյեկտ-էներգոսբյուրոյի կողմից չէին ուղարկված բոլոր նախագծերը։ Այս բոլորը վտանգի տակ էին գնում ԳԷՍ-ի ժամանակին շահագործման հանձնելը, մի հանգամանք, որն իր հերթին սպառնում էր հարված հասցնել կառուցվող այնպիսի էներգատար գործարանների անընդմեջ աշխատանքին, ինչպիսիք էին Կիրովականի քիմիական կոմբինատը, Երևանի կարբիդի գործարանը, Ալավերդու պղնձաձուլական գործարանը, Դավալուի ցեմենտի գործարանը։ Նման պայմաններում ՀԼԿԵՄ Կենտկոմը 1932 թ. մայիսի 16-ին գիմում է ՀամԼԿԵՄ Կենտկոմին և «Կոմսոմոլսկայա պրավդա» թերթի խմբագրությանը՝ Քանաքեռ-գէսին ռեալ օգնություն ցույց տալու մասին։ Այդ գիմումում մանրամասնորեն նկարագրվում էր Քանաքեռգէսի դերն ու նշանակությունը ռեսպուբլիկայի արդյունաբերության զարգացման գործում, նշվում էին այն արտադրական ձեռնարկությունները, որոնց հաջող աշխատանքը կախված էր Քանաքեռգէսը ժամանակին շահագործման հանձնելուց, այդ գործարանների տեղն ու դերը ռեսպուբլիկայի և Սովետական Միության ժողովրդական տնտեսության մեջ։

ՀԼԿԵՄ Կենտկոմը այդ գիմումում պահանջ էր դնում գործարանների և մատակարարող օրգանների կոմերիտական կազմակերպությունների միջոցով ապահովել Քանաքեռգէսի պատվերների ժամանակին կատարումը և շինանյութով ու սարքավորումներով ապահովումը։ «ՄԵՆՔ՝ Մոսկվայի Կալինինի անվան, Լենինգրադի Լենինի անվան, Մոսկվայի էլեկտրոսիլա գործարանների կոմերիտական կազմակերպությունների առաջ, Գլավէներգոյի և Էներգոսբիտի ԼԿԵՄ կազմակերպությունների առաջ դնում ենք կոմերիտական պահանջ՝ էլեկտրիֆիկացիայի նկատմամբ շեֆության կարգով ապահովել Քանաքեռգէսի պատվերների ժամանակին կատարելը և շինանյութերով ապահովելը»[2],— ասված է գիմումում։

Ընդգծելով, որ ՀԿՊ Կենտկոմը վերադառ օրգանների առաջ հարց է բարձրացրել Քանաքեռգէսը ՍՍՌՄ հարվածային շինարարության շարքը դասելու համար, ՀԼԿԵՄ Կենտկոմը այդ գիմումում խնդրում է միջնորդել համապատասխան օրգանների առաջ լուծելու այդ հարցը, նշելով, որ ԳԷՍ-ը ժամանակին շահագործման հանձնելը հնարավոր է միայն հարվածային մատակարարման և պատվերների կատարման պայմաններում։ ՀԼԿԵՄ Կենտկոմի այս գիմումը զգալիորեն նպաստեց շինարարական աշխատանքների աշխուժացմանը։

1932 թ. հունվարին հրավիրված ՀԿՊ 8-րդ համագումարը ամփոփելով պարտիայի մոտ երկու տարվա կատարած աշխատանքները, հանգամանորեն կանգ է առնում նաև ՀԼԿԵՄ-ի կատարած քաղաքական, կուլտուրական, տնտեսական աշխատանքների վրա։ «Հայաստանի կոմերիտմիությունը,— ասված է ՀԿՊ Կենտկոմի հաշվետու զեկուցման մեջ,— մեր պարտիայի առաջին և հավատարիմ օգնականը, հաշվետու շրջանում ավելի է աճել ու ամրացել, նա ձեռք է բերել անվիճելի նվաճումներ իր կազմակերպությունների վերակառուցման, աշխատանքները տնտեսական շինարարության ճակատամասերին մոտեցնելու ուղղությամբ։ Սոցիալիստական մրցության և հարվածայնության լայն ծավալման համար ամենից առաջ պարտական ենք բանվորական երի-

[1] Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 48, դ. 493, թ. 100։

[2] Նույն տեղում, թ. 100։

ասասարդությանը, որը կոմերիտմիության ղեկավարությամբ շարունակում է առաջ ընթանալ աշխատանքի նոր՝ սոցիալիստական ձևերի ամրապնդման նախաձեռնողների շարքերում»[1]։

Հայաստանի Կոմպարտիայի 8-րդ համագումարը պահանջում է պարտիական, պրոֆմիութենական, կոմերիտական կազմակերպություններից, տնտեսական օրգաններից անհապաղ ծավալել սոցիալիստական մրցության ավելի բարձր ձևերը, ապահովել աշխատանքային կարգապահության առավելագույն ամրապնդումը։

Համագումարը պահանջում է Կենտկոմից միջոցներ ձեռք առնել նշված ժամկետին գործարկելու քիմշինը, ցեմշինը, Զորագէսը, Քանաքեռագէսը, երկրորդ Երգէսը, 1932 թ. սկսել Քաղսի — Դյումուշ հիդրոկայանի շինարարությունը, ուժեղացնել ղյուղական էլեկտրակայանների շինարարության տեմպը, միջոցներ ձեռք առնել Մեղրու, Շաքիի, Ազիզբեկովի էլեկտրակայանները շուտափույթ գործարկելու համար, արագացնել Ալավերդու պղնձաձուլական և Վ.ափանի ֆլոտացիոն գործարանների կառուցումը, ապահովել 1932 թ. 5000 տոննա պղնձի ստացումը։ Այս կապակցությամբ նոր խնդիրներ են դրվում և կոմերիտական կազմակերպությունների առջև։

ՀԿՊ Կենտկոմի բյուրոն 1932 թ. օգոստոսի 8-ին քննարկելով Քանաքեռագէսի շինարարության ընթացքը, մի շարք միջոցառումների հետ միասին Երևանի ԼԿԵՄ Քաղկոմին առաջարկում է. «ելնելով շինարարության աշխատանքի վիճակից, մշակել մի շարք նոր միջոցառումներ կազմակերպական-մասսայական աշխատանքները շինարարների շրջանում ուժեղացնելու և նրանց կուլտ-կենցաղային սպասարկումը բարելավելու համար»[2]։

Պարտիայի համագումարի և Կենտրոնական Կոմիտեի որոշումները ոգևորության մի նոր ալիք բարձրացրին կոմերիտական կազմակերպության, երիտասարդ շինարարների մեջ, որոնք իրենց երիտասարդական ամբողջ եռանդը ի սպաս դրեցին ռեսպուբլիկայի խոշորագույն էլեկտրակայանի կառուցման գործին։

Հայաստանի կոմերիտական կազմակերպությունը, որպես էլեկտրիֆիկացիայի շնֆ, մեծ աշխատանք է կատարում նաև մյուս հիդրոկայանների կառուցման բնագավառում։ Իջևանի էլեկտրակայանը 1931 թ. մայիսի մեկին շահագործման հանձնելու համար կոմերիտական կազմակերպությունը անց է կացնում շարաթօրյակ։ 700 կոմերիտականների և երիտասարդների եռանդուն աշխատանքի շնորհիվ մաքրվում է էլեկտրակայանի ջրանցքը, և կայանը ժամկետից շուտ հանձնվում է շահագործման։ Սիսիանի շրջանում կառուցվող Շաքիփէսի վրա աշխատելու համար տեղի կոմերիտական կազմակերպությունը տրամադրում է 3000 բանվորական օր[4]։

Մեծ աշխատանք է կատարում Լենինականի կոմերիտական կազմակերպությունը։ Լենգէսի կոմերիտականների ուժերով 1932 թ. էլեկտրակայանում անց է կացվում տուրբինների նորոգում, 550 մետր ջրանցքի փորում և վերանորոգում, որի շնորհիվ տնտեսվում է 36 հազար ռուբլի։

---

[1] Ա. Խանջյան, ՀԿ(բ)Կ ԿԿ հաշվետվությունը 8-րդ համագումարին, Երևան, 1932, էջ 122։

[2] ՀԿ(բ)Կ 8-րդ համագումարի բանաձևերը, Երևան, 1932, էջ 8։

[3] Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 10, գ. 589։

[4] Նույն տեղում, ֆ. 48, գ. 498, թ. 17։

Ռեսպուբլիկայի կոմերիտական կազմակերպությունները ակտիվ մասնակցություն են ցույց տալիս 130 կիլոմետր երկարությամբ բարձրավոլտ էլեկտրահաղորդման գծերի անցկացման գործում։ Երևան — Դավալու էլեկտրահաղորդման գծի շինարարական աշխատանքները կատարվում են բացառապես կոմերիտականների ուժերով՝ աշնանը, բերքահավաքի կամպանիայի ժամանակ։ Կոմերիտականները ցերեկը աշխատում էին գյուղատնտեսության բնագավառում, իսկ գիշերը էլեկտրահաղորդման գծերի վրա։ Ցեմշինը էլեկտրաէներգիայով ապահովելու համար կոմերիտականները փորեցին 2,5 մետր խորությամբ մոտ 1000 փոս՝ էլեկտրահաղորդման գծի սյուների համար, այդ փոսերի մոտ տեղափոխեցին 25 վագոն անտառանյութ, ամրացրին սյուները և կատարեցին էլեկտրահաղորդման գծի մոնտաժը[1]։

1932 թ., երբ Զորագէսի հիդրոկայանի կառուցման աշխատանքները մոտենում էին իրենց ավարտմանը, անհրաժեշտ էր էլեկտրական լարեր անցկացնել Կիրովականում կառուցվող քիմիական կոմբինատին էլեկտրաէներգիա տալու համար, Լոռվա լեռների ու ժայռերի վրա բարձրացնել հսկայական կայմասյուներ՝ այն դեպքում, երբ ոչ մի փոխադրական միջոց այնտեղ հնարավոր չէր օգտագործել։ Այդ դժվարին գործը իր վրա է վերցնում Կիրովականի կոմերիտական կազմակերպությունը, որը 22,5 կիլոմետր երկարությամբ էլեկտրահաղորդման գիծը անց է կացնում շատ կարճ ժամկետում։

Մեծ աշխատանք են տանում Երևանի և Լենինականի հիդրոկայանների կոմերիտական կազմակերպությունները, էլեկտրաէներգիայի կորստի և կայանի սեփական կարիքների համար նրա ծախսի գործակցի կրճատման, ագրեգատների լրիվ օգտագործման ժամերի քանակի բարձրացման և էլեկտրաէներգիայի ինքնարժեքի իջեցման ուղղությամբ։ 1932 թ. Լենգէսում և Երգէսում կայանների սեփական կարիքների համար ծախսվել է ամբողջ արտադրած էներգիայի 6,4 տոկոսը՝ նախատեսված 15,8 տոկոսի փոխարեն[2]։

Հնգամյակի տարիներին էլեկտրաշինարարության բնագավառում տեղի ունեցավ անվիճելի առաջընթաց։ Սակայն կառուցման մեջ գտնվող կայանների ուժը արդեն բաժանված էր գոյություն ունեցող սպառող կամ կառուցվող միավորի վրա, որի պատճառով աշխատանք էր տարվում ջրային նոր ռեսուրսներ հայտնաբերելու և օգտագործելու ուղղությամբ։ 1932 թ. քննվում և հաստատվում է Հայաստանի ջրային կադաստրի նախնական վարիանտը։ Ուսումնասիրված ինը գետերի տարեկան միջին ուժը կազմեց 1 միլիոն 618 հազար ձիու ուժ, հիմնականում դրական վճիռ ստացավ Սևանա լճի ջրի պաշարի օգտագործման խնդիրը։ Նախագծվում էր Հրազդան գետի վրա կառուցել հզոր էլեկտրակայանների ցանց։ Կոմերիտական էլեկտրաշեֆական աշխատանքի կարևոր բնագավառներից մեկը դառնում է էլեկտրիֆիկացիայի գաղափարի պրոպագանդան։ Հայաստանի էլեկտրիֆիկացիայի մեծ ծրագիրը, որը հիմքից փոխելու էր ամբողջ երկրի տնտեսական պատկերը, դառնում է լայն ուսումնասիրության և մասսայականացման առարկա։ ՀԼԿԵՄ Կենտկոմի բյուրոն 1931 թ.

---

[1] Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 48, գ. 499, թ. 18։

[2] *В. Берлин*, Электростроительство и электрификация ЗСФСР в 1933 г. и очередные задачи комсомола края, Тифлис, 1933, стр. 11.

Նոյեմբերի 15-ին հատուկ որոշում ընդունեց «Հայաստանի էլեկտրիֆիկացիայի գլխավոր պլանի ԼԿԵՄ կազմակերպությունների կողմից մշակման և մասսայականացման մասին»։ Բյուրոն դտնում է, որ ՀՍՍՌ Պետպլանի կողմից կազմվող էլեկտրիֆիկացիայի գլխավոր պլանի քննարկումը, մշակումն ու մասսայականացումը կոմերիտական կազմակերպությունների համար պետք է դառնա հիմնական հարց։ Բյուրոյի որոշմամբ, Հայաստանում սովետական կարգերի հաստատվելու 11-րդ տարեդարձի օրը՝ 1931 թ. նոյեմբերի 29-ը հայտարարվում է էլեկտրիֆիկացիայի մասսայականացման օր և մինչև այդ օրը ԼԿԵՄ կազմակերպություններում լայնորեն քննարկվում է էլեկտրիֆիկացիայի գլխավոր պլանը։ Երևանում, Լենինականում, Կիրովականում, Ալավերդում, Արթիկում, Ստեփանավանում, Ղափանում, Կոտայքում հրավիրվում են քաղաքային և շրջանային կոմերիտական կոնֆերանսներ՝ նվիրված էլեկտրիֆիկացիայի գլխավոր պլանի և ԼԿԵՄ էլեկտրաշեֆական աշխատանքների հարցերին։ ՀԱՄԽ-ի և Պետպլանի հետ միասին կազմակերպվում է հեռանկարային գլխավոր պլանի ուսուցումը։ 1931 թ. դեկտեմբերի 19-ին լսելով զեկուցում «Սևանի պրոբլեմի մասին», ՀԼԿԵՄ Կենտկոմի բյուրոն որոշում է ընդունում այդ հարցը բոլոր կոմերիտականների և երիտասարդների շրջանում լայնորեն մասսայականացնելու մասին։

1932 թ. մայիսին կայացած ՀԼԿԵՄ 8-րդ համագումարը «անհրաժեշտ է համարում էլեկտրիֆիկացիայի գլխավոր պլանը ամենակարճ ժամանակամիջոցում մասսայականացնել կազմակերպության բոլոր օղակներում և կոմերիտական խիստ վերահսկողություն սահմանել գործող էլեկտրակայանների էներգիայի ռացիոնալ և խնայողաբար օգտագործման համար[2]»։

Առաջին հնգամյակի տարիներին Հայաստանում կառուցվեցին մի շարք նոր էներգատար ձեռնարկություններ։ Հիմնական խնդիր էր հանդիսանում յուրացնել այդ ձեռնարկությունները, տիրապետել նրանց տեխնիկային։ Բավական չէր կառուցել հզոր էլեկտրակայաններ, անհրաժեշտ էր ստացված էներգիան կիրառել նաև ֆաբրիկաներում և գործարաններում, էլեկտրականությունը ներդնել ձեռնարկություններում՝ տեխնոլոգիական պրոցեսի մեջ։ Դրա համար հարկավոր էր յուրացնել այն բարդ էլեկտրասարքավորումը, որով հագեցված էին ռեսպուբլիկայի գործարանները, հանքերը, ֆաբրիկաները, տրանսպորտը։

Էլեկտրասարքավորումը լայնորեն ներդրվում էր պղնձի, քիմիական, շինանյութերի, մետաղամշակման, տեքստիլ արդյունաբերության մեջ։ Այսպես, պղնձարդյունաբերության մեջ կար 409 էլեկտրաշարժիչ, 16 սկզբնական շարժիչ։ Հսկայական չափով աճել էր Ալավերդու էլեկտրատնտեսությունը. 1932 թ. Ալավերդում գործում էին 1100 կիլովատ հզորությամբ 13 տրանսֆորմատորային ենթակայաններ, որոնք արտադրում էին 7 միլիոն կիլովատ-ժամ էլեկտրաէներգիա։ Էլեկտրալուսավորման էր ենթարկված 4 կիլոմետր տարածությամբ հանքահոր։

Կենտկոմի մի շարք որոշումներով լայն շարժում է կազմակերպվում էլեկտրատեխնիկային տիրապետելու համար, կազմակերպվում են էլեկտրատեխնիկան ուսումնասիրող խմբակներ։ Դպրոցների և ֆաբգործուսների ծրագրերում

[1] Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 50, գ. 401, թ. 17—19։

[2] ՀԼԿԵՄ 8-րդ համագումարի բանաձև, 1932, Երևան, էջ 8։

հատուկ տեղ է հատկացվում էլեկտրական գործնական դիտելիքների ուսումնասիրմանը, աշխատանք է տարվում բանվոր, բատրակ, կոլտնտեսական երիտասարդներին էլեկտրատեխնիկական բուհեր, տեխնիկումներ, ֆաբգործուսներ գործուղելու համար։ Բոլոր արդյունաբերական վայրերում կազմակերպվում էին էլեկտրաբջիջներ։ Էլեկտրաշեֆությունը վերցնելուց 1 տարի հետո Հայաստանում արդեն ստեղծված էին էլեկտրաբջիջներ. Երևանում՝ 25 հատ, Լենինականում՝ 12, Կիրովականում՝ 6 և այլն[1]։

Յուրաքանչյուր արտադրական պրոցեսի, յուրաքանչյուր մեխանիզմի, դազգահի և մեքենայի մանրակրկիտ ուսումնասիրման հիման վրա կոմերիտականներին հաջողվում է օգտագործել էլեկտրականությունը տեխնոլոգիական պրոցեսի մեջ։ Պայքար է տարվում էլեկտրատնտեսության ռացիոնալիզացիայի համար։ Մի շարք ձեռնարկություններում կոմերիտական կազմակերպությունների ուժերով զգալի արդյունքներ են ձեռք բերվում էլեկտրաէներգիայի խնայողության գործում։ Կոմերիտական կազմակերպությունները պայքար են տանում էլեկտրատնտեսությունների աշխատանքների հստակ կազմակերպման և նպատակասլաց ղեկավարման համար, որպեսզի յուրաքանչյուր էլեկտրաշարժիչ, յուրաքանչյուր ագրեգատ ունենա իր կցված կոմերիտականը, խնամքի համար պատասխանատու անձը։

Էլեկտրաէներգիայի կորուստների դեմ պայքարելու համար Լենինականում կազմակերպվում են 3 կոմերիտական բրիգադաներ, որոնց անդամները հսկողություն են սահմանում էլեկտրաէներգիայի ռացիոնալ օգտագործման և էլեկտրասարքավորումների անխափան աշխատանքի վրա։ Կոմերիտական հսկողության շնորհիվ 1932 թ. տրվեց 6172 ռ. էլեկտրաէներգիայի խնայողություն[2]։

Լենինականի տեքստիլ կոմբինատի էլեկտրացեխի կոմերիտականների բարեխիղճ աշխատանքի շնորհիվ օգտակար գործողության գործակիցը 0,8-ից հնգամյակի վերջում բարձրանում է 0,9-ի։ Տրիկոտաժի ֆաբրիկայում 100 կիլոգրամ գործվածքի ստացման համար պլանով նախատեսված 167,2 կիլովատ-ժամ էլեկտրաէներգիայի փոխարեն կոմերիտականները օգտագործում են 153,5 կիլովատ-ժամ[3]։

Շատ են Հայաստանի կոմերիտական կազմակերպությունների, կոմերիտականների և երիտասարդների աշխատանքային սխրագործությունները ռեսպուբլիկայի էլեկտրիֆիկացման բնագավառում։ Նրանք իրենց ակտիվ աշխատանքով նպաստեցին ռեսպուբլիկայի էլեկտրիֆիկացիայի հնգամյա պլանը 3 տարում կատարելուն։ Զորագէսի, Քանաքեռագէսի և Հայաստանի ողջ կոմերիտական կազմակերպությունը, գտնվելով մեր ռեսպուբլիկայի էլեկտրիֆիկացիայի համար մղվող պայքարի առաջին շարքերում, բարձր պահեց էլեկտրիֆիկացիայի շեֆի պատվավոր կոչումը, մի անգամ ևս ապացուցելով, որ նա հանդիսանում է պարտիայի լավագույն օգնականը, պարտիայի լենինյան գծի անշեղ կենսագործողը։ Սովետական Հայաստանի կառավարությունը ըստ արժանվույն գնահատելով Հայաստանի լենինյան կոմերիտմիության կատարած անձնազոհ աշխատանքը, 1932 թ. նոյեմբերի 14-ին, Զորագէսի հանդիսավոր բացման առթիվ նրան պարգևատրեց ռեսպուբլիկայի բարձրագույն պարգևով՝

[1] Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 48, գ. 491, թ. 85—86։

[2] Նույն տեղում, ֆ. 48, գ. 574, թ. 4։

[3] Նույն տեղում, թ. 13։

Աշխատանքային Կարմիր Դրոշի շքանշանով։ Շատ կոմերիտական բանվորներ պարգևատրվեցին ՀՍԽՀ Կենտգործկոմի պատվոգրերով։

1932 թ. նոյեմբերի 15-ին տեղի ունեցավ Զորագէսի հանդիսավոր բացումը, որին մասնակցում էին մոտ 3000 հոգի, այդ թվում Դնեպրոգէսի, Վոլխովստրոյի, Սվիրստրոյի, Ռիոնգէսի, Քանաքեռգէսի և երկրի մյուս խոշոր հիդրոկայանների ներկայացուցիչները։ Գետի աջ ափին՝ վիթխարի ժայռի վրա, թունելի ճակատին գրված էր. «Կեցցե Լենինյան կոմերիտմիությունը — էլեկտրիֆիկացիայի շեֆը», «Նրանք արժանի են էլեկտրիֆիկացիայի շեֆի պանծալի կոչմանը»։ Ընթերցվեցին ողջույնի բազմաթիվ հեռագրեր։ ՀԼԿԵՄ Կետկոմի ողջույնի հեռագրում ասված էր. «Հայաստանի կոմերիտմիությունը հպարտանում է նրանով, որ Զորագէսի կոմերիտմիությունը բարձր պահեց էլեկտրիֆիկացիայի շեֆի կոչումը, ամենաակտիվ մասնակցությունը ցույց տալով Զորագէսի հիդրոկայանի կառուցման մեծ աշխատանքներին։ Մենք համոզված ենք, որ Զորագէսի կոմերիտական կազմակերպությունը իր աշխատանքի և պայքարի փորձով զինված կօգնի Հայաստանի կոմերիտական կազմակերպությանը և հատկապես Քանաքեռգէսի կազմակերպությանը՝ պայքարելու էլեկտրիֆիկացիայի մեծ պլանի իրականացման համար»[1]։ «Աշխատանքային Կարմիր Դրոշի» շքանշանով պարգևատրվելու փաստը ավելի ոգեշնչեց ռեսպուբլիկայի կոմերիտականներին և երիտասարդներին, որոնք պարտիայի ղեկավարությամբ բուռն թափով ձեռնամուխ եղան Հայաստանի ավելի խոշոր օբյեկտի կառուցման՝ Քանաքեռգէսի շինարարության աշխատանքներին, բարձրացնելով այն նոր, ավելի բարձր մակարդակի։ 1932 թ. նոյեմբերի 26-ին տեղի ունեցավ ՀԼԿԵՄ Կենտկոմի և Երևանի քաղկոմի հանդիսավոր պլենումը՝ նվիրված ՀՍԽՀ Կենտգործկոմից «Աշխատանքային Կարմիր Դրոշի» շքանշան ստանալուն և էլեկտրիֆիկացիայի բնագավառում կոմերիտմիության ունենալիք խնդիրներին։ Պլենումը դիմում ընդունեց ուղղված Սովետական Հայաստանի կոմերիտականներին, երիտասարդ բանվորներին և աշխատավորներին։ Դիմումը հրատարակվեց «Ավանգարդ» թերթում[2].

Պլենումը անհրաժեշտ համարեց 1932 թ. դեկտեմբեր ամիսը հայտարարել առաջին հնգամյակի ավարտական գրոհի ամիս։ Քանաքեռգէսը հայտարարելով կոմերիտական հարվածային շինարարություն, պլենումը պահանջում էր բոլոր շրջկոմներում, քաղկոմներում, սկզբնական կազմակերպություններում քննարկել Քանաքեռգէսին կոնկրետ օգնություն ցույց տալու խնդիրը, շինարարության մշտական աշխատանքի համար մոբիլիզացնել 120 կոմերիտական, մասսայականացնել Զորագէսի, երկրորդ Երգէսի շինարարության հաջողություններն ու աշխատանքի փորձը և կոմերիտականների կատարած աշխատանքը այդ շինարարությունում։ Պլենումն իր բանաձևում հավաստիացնում է պարտիային և կառավարությանը, որ կոմերիտմիությունը իր ձեռքում ունենալով Աշխատանքային Դրոշի շքանշանը, կգործադրի իր ամբողջ եռանդն ու ջանքերը Իլյիչի լամպը ամբողջ աշխարհում վառելու գործում[3]։ Պլենումը պահանջում է երիտասարդության շրջանում լայնորեն մասսայականացնել Հայաստանի էլեկտրիֆիկացիայի երկրորդ հնգամյակի խնդիրները և էլեկտրաշինարա-

[1] «Ավանգարդ», 15 նոյեմբերի, 1932։
[2] Նույն տեղում, 29 նոյեմբերի, № 276։
[3] Նույն տեղում, 28 նոյեմբերի, № 275։

ության 1933 թ. ստուգիչ թվերը, անցկացնել կոնֆերանսներ նվիրված Սևան—Հրազդան պրոբլեմի լուծմանը։ Էլեկտրիֆիկացիայի զաղափարների պրոպագանդային գործնական աշխատանքի կազմակերպման մեջ մեծ նշանակություն ունեցավ 1933 թ. հունիս ամսին կոմերիտմիության կողմից Թբիլիսիում հրավիրված Անդրկովկասյան էլեկտրատեխնիկական կոնֆերանսը։ Այդ կոնֆերանսը իր նշանակությամբ և արծարծած խնդիրներով բացառիկ դեր կատարեց Անդրկովկասի, այդ թվում և Հայաստանի կոմերիտական կազմակերպությունների կատարած էլեկտրաշեֆական աշխատանքների մեջ։ Կոնֆերանսը բազմակողմանիորեն և մանրաղնին կերպով քննարկեց բոլոր այն հիմնական խնդիրները, որոնք բխում էին ժողովրդական տնտեսության էլեկտրիֆիկացիայի մեծ պլանից։ Կոնֆերանսը ամբողջ սրությամբ դրեց կոմերիտմիության էլեկտրաշեֆական աշխատանքների է՛լ ավելի կոնկրետացման խնդիրը և ձեռք բերած փորձի հիման վրա գործնական միջոցառումներ մշակեց շեֆական աշխատանքը նոր թափով ծավալելու համար։ Հայաստանում լայն նախապատրաստական աշխատանք էր տարվում Անդրկովկասյան կոնֆերանսին հաջող մասնակցելու համար։ ՀԼԿԵՄ Կենտկոմի որոշմամբ, 1933 թ. մարտի 15—25-ը ռեսպուբլիկայի բոլոր արտադրական-շինարարական ձեռնարկություններում անց. են կացվում էլեկտրատեխնիկական կոնֆերանսներ, որոնք տալիս են դգալի արդյունք։ Վերակազմակերպվում են շրջկոմներին և քաղկոմներին կից էլեկտրասեկցիաների աշխատանքները[1]։

Կոմերիտական կազմակերպությունների հետ միասին Անդրկովկասյան էլեկտրատեխնիկական կոնֆերանսին լայնորեն նախապատրաստվում են նաև Հայաստանի պարտիական, սովետական և տնտեսական օրգանները։ Կոնֆերանսում Հայաստանից մասնակցում էին 40 մասնագետներ։ Զեկուցումներով հանդես եկան 14 հոգի։ Զեկուցումներն ամբողջովին բխում էին ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցման առօրյա խնդիրներից։

Կոնֆերանսը նոր ուժ հաղորդեց էլեկտրաշեֆական աշխատանքներն էլ ավելի բարձր մակարդակի վրա բարձրացնելու գործին։

* * *

Սովետական ժողովուրդը Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ 4 տարի 3 ամսում հաջողությամբ կատարեց առաջին հնգամյա պլանը։ Հայաստանի ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում ներդրվեց 319063200 ռուբլի, որից արդյունաբերության մեջ՝ 135633400 ռուբլի[2]։ Այս խոշոր ներդրումները որակական մեծագույն տեղաշարժեր առաջ բերին ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության մեջ։ Հիմնովին փոխվեց Հայաստանի տնտեսական-կուլտուրական քարտեզը։ Մինչև հնգամյակը արդյունաբերությունից զրեթե զուրկ Հայաստանը ծածկվեց արդյունաբերական ձեռնարկությունների խիտ ցանցով։ Առաջին հնգամյակի ընթացքում գործարկվեցին 22 արդյունաբերական ձեռնարկություններ, սկսվեց 24 ավելի խոշոր գործարանային միավորների՝ Ալավերդու պղնձաձուլական, Ղափանի ֆլոտացիոն, Դա-

[1] Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 10, գ. 574, թ. 27։

[2] Խորհրդային Հայաստանի 15 տարին թվերով, Երևան, 1935, էջ 48։

վալուի ցեմենտի, Երևանի կարբիդի երկրորդ գործարանների, Կիրովականի, Ալավերդու քիմիական կոմբինատների շինարարությունը։ Մեծ տեղաշարժեր կատարվեցին ռեսպուբլիկայի էլեկտրիֆիկացման գործում։ Էլեկտրակայանների շինարարության մեջ ներդրվեց 39810 հազար ռուբլի, որից 29370 հազար ռուբլին հնգամյակի երրորդ և չորրորդ տարիներին։ Իսկ երկրորդ հնգամյակի առաջին երկու տարվա ընթացքում ներդրվեց 45515 հազար ռուբլի[1]։

Հայաստանը էլեկտրիֆիկացիայի գծով ձեռք բերեց խոշոր հաջողություններ։ 1928—32 թթ. ռեսպուբլիկայում կառուցվեց 9 էլեկտրակայան։ Գործարկվեցին Իջևանի, Հորիսի, Դիլիջանի, Լենինականի, Երևանի երկրորդ կայանները, առաջին հնգամյակի խոշորագույն ձեռնարկությունը՝ Զորագեսը։ Սկրսվեց Սևան—Հրազդան կասկադի առաջին կայանի՝ Քանաքեռ-գեսի շինարարությունը։ Զգալի չափով ավելացավ գործող էլեկտրակայանների հզորությունը՝ 1932 թ. հասնելով 23000 կիլովատի, իսկ 1933 թ. 39600 կիլովատի՝ 1913 թ. 1500 կիլովատի փոխարեն։ 1933 թ. արտադրվեց 77,8 միլիոն կիլովատ-ժամ էլեկտրաէներգիա[2]։ Էլեկտրականությունը մուտք գործեց արդյունաբերության բոլոր ճյուղերը։

Այս բոլորի շնորհիվ արդյունաբերության արտադրանքի տեսակարար կշիռը ժողովրդական տնտեսության մեջ կազմեց 52,4 տոկոս, 1929 թ. 29%-ի փոխարեն։ Հայաստանում ստեղծվեց սոցիալիզմի կառուցման արդյունաբերական ամուր պատվանդան։ Մեր ռեսպուբլիկան զուտ ագրարային հետամնաց երկրից վերածվեց ինդուստրիալ-ագրարային երկրի։

Առաջին հնգամյակի հաջող ավարտելը արդյունք էր այն բանի, որ Կոմունիստական պարտիան կարողացավ ժողովրդական մասսաներին անշեղ առաջնորդել հանճարեղ Լենինի ուրվագծած ուղիներով։ Ակտիվորեն մասնակցելով առաջին հնգամյակի իրագործմանը, Հայաստանի կոմերիտմիությունը Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ հանդիսացավ Հայաստանի ողջ երիտասարդության կազմակերպիչն ու ավանգարդը, դարձավ հարվածային խմբակ սոցիալիստական շինարարության բոլոր բնագավառներում՝ հանդես բերելով իր նախաձեռնությունը, օգնությունը և անձնազոհությունը։

Կոմերիտմիությունը հանդիսացավ սոցիալիստական մրցության և հարվածայնության նախաձեռնողը և լայնորեն տարածողը բանվոր-երիտասարդության մասսաների մեջ։ Ալավերդու և Ղափանի պղնձի հանքերում, Զորագետի և Հրազդանի ջրի ուժը սանձահարելու գործում, Լենինականի տեքստիլ գազգահների մոտ, ամենուրեք, մեր սոցիալիստական շինարարության բոլոր ճակատամասերում կոմերիտմիությունը ցույց տվեց իր անսահման նվիրվածությունը բանվոր դասակարգի գործին, լենինյան պարտիայի գլխավոր գծին։

Այդ նվաճումներին կոմերիտմիությունը հասավ միայն և միայն պարտիական ամենօրյա հաստատուն ղեկավարության շնորհիվ։ Ամեն պարտիական կորիզը կոմերիտմիության մեջ. 1932 թ. կոմերիտմիության անդամներից 7242-ը միաժամանակ պարտիայի անդամներ ու անդամության թեկնածուներ էին, որը կազմում էր բոլոր պարտիականների 36,2%-ը[3]։

---

[1] Խորհրդային Հայաստանի 15 տարին թվերով, Երևան, 1935, էջ 48-49։
[2] Նույն տեղում, էջ 68-70։
[3] Նյութեր Հկ(բ)Կ կենտկոմի հաշվետվության համար կազմակերպության 8-րդ համագումարին, Երևան, 1932, էջ 45։

1929 հունվարից մինչև 1931 թ. հոկտեմբերը պպարտիայի շարքերն ընդունված 12206 անդամ-թեկնածուներից 5255-ը կոմերիտականներ էին[1]։

Հայաստանի լենինյան կոմերիտմիությունը մեծապես աճեց և ամրացավ առաջին հնգամյակի համար մղված հերոսական պայքարում։ Հնգամյակի վերջում ռեսպուբլիկայի կոմերիտական կազմակերպությունը իր շարքերում միավորում էր մոտ 55000 պատանիներ ու աղջիկներ, 1929 թ. 21000-ի դիմաց։ Միայն հնգամյակի ավարտական տարում՝ 1932 թ. Համլկեմ շարքերն ընդունվեցին 17000 երիտասարդներ։

Լենինյան կոմերիտմիությունը ակտիվորեն մասնակցելով սոցիալիզմի տնտեսական հիմքի կառուցման համար մղվող պայքարին, կուտակելով աշխատանքի հարուստ փորձ, Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ ձեռնամուխ եղավ երկրորդ հնգամյակի է՛լ ավելի դժվարին խնդիրների իրականացմանը։

---

[1] Նյութեր Հկ(բ)կ կենտկոմի հաշվետվության համար կուսակցության 8-րդ համագումարին, Երևան, 1932, էջ 50։